

ԱՐՏԱԿ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅԸ ՄԱԿ–ՈՒՄ

Արաբա–խորայեական, դեռևս վերջնականորեն չկարգավորված հակամարտության ֆոնի վրա առանձնապես խիստ սրությամբ է դրված Երուսաղեմի կարգավիճակի հարցը։ Չնայած կնքված բազմաթիվ համաձայնագրերին և պայմանագրերին¹, Երուսաղեմի շուրջ հակամարտող կողմերը դեռ չեն եկել ընդհանուր հայտարարի։ Իսկ դա խոսում է այն մասին, թե որքան կարևոր և առանցքային տեղ է գրավում Երուսաղեմը արաբ և հրեա ժողովուրդների կյանքում և շուրջ 55 տարի տևող արաբա–խորայեական հակամարտության մեջ։

Երեք հազար տարի առաջ Հուդայական անապատի ծայրամասում գտնվող Երուսաղեմ քաղաքը նվաճվեց հրեաների թագավոր Դավիդի կողմից, որը այդ քաղաքը դարձրեց ոչ միայն իր թագավորության մայրաքաղաքը, այլև հոգևոր–մշակութային կենտրոնը²։ Այդ իրադարձությունը շրջադարձային հանդիսացավ քաղաքի պատմության համար, քաղաք, որը մինչ այդ ոչինչով առավել չէր ավելի հին ու ավելի հայտնի պաղեստինյան քաղաքներից, այնպիսիներից՝ ինչպիսիք էին Մեգիդոն, Երիքովը և Աշքելոնը³։ Դավիդի որոշումը՝ Երուսաղեմ տեղավաժել հրեաների գլխավոր և ուրբ մասունք հանդիսացող տապանը, որը հետագայում Սողոմոնի կառավարման տարիներին տեղադրվեց «սրբության սրբոց» հանդիսացող տաճարում⁴ խիստ բարձրացրեց Երուսաղեմի նշանակությունը։ Հենց այս քաղաքում, համաձայն երեք կրոնների գաղափարախոսության, տեղի են ունեցել համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունները։

Երուսաղեմը նվաճվել է ավելի քան 80 անգամ, հաճախ է ավերվել և վերականգնվել՝ երբեմն փոխելով իր արտաքին տեսքը⁵։ Երուսաղեմի պատմության դրամատիկ զարգացման լավագույն արտացոլում է հանդիսանում տարբեր ժամանակներում քաղաքին տրված տարբեր անվանումները⁶։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1917 թ. դեկտեմբերի 11–ին Պաղեստինյան ճակատում գտնվող անգլիական զորքերի հրամանատար գեներալ Ալեքսին մտավ Երուսաղեմ։ Քաղաքի իշխանությունը անցավ անգլիական ռազմական ադմինիստրացիային։

Քաղաքը կառավարելու առաջին իսկ օրերից անգլիացիները մի շարք քայլեր ձեռնարկեցին պատերազմից քայքայված Երուսաղեմում իրավիճակը կարգավորելու նպատակով⁷:

1920 թ. անգլիական կառավարությունը վերացրեց ռազմական կառավարումը քաղաքում և հաստատեց քաղաքացիական վարչակազմ՝ գերագույն կոմիսարի գլխավորությամբ: 1923 թ. Ազգերի Լիգան պաշտոնապես հաստատեց բրիտանական մանդատը Պաղեստինի վրա՝ ընդգծելով հրեական ազգային օջախի ստեղծման անհրաժեշտությունը⁸: Անգլիացիները Երուսաղեմում ստեղծեցին քաղաքացիական և դատական հաստատությունների կանոնակարգված ցանց: 1924 թ. առաջին անգամ ընտրվեց քաղաքային խորհուրդ, որի կազմի մեջ մտան չորսական ներկայացուցիչներ երեք կրոնական համայնքներից՝ հրեական, քրիստոնեական և մուսուլմանական: Քաղաքապետ նշանակվեց մուսուլմաններից, իսկ նրա տեղակալներ դարձան մեկ հրեա և արաբ քրիստոնյա⁹: Իսկ քաղաքացիական աշխատակազմի ղեկավար նշանակվեց Երուսաղեմի մախկին ռազմական մահանգապետ՝ գնդապետ Ռոնալդ Սթոքսը, որը ավելի շատ արաբամետ կողմնորոշում ուներ¹⁰: Երուսաղեմի դառնալը Պաղեստինի մանդատային տարածքի վարչական կենտրոն՝ հանգեցրեց տեղի բնակչության շահերը արտահայտող երկու հիմնական խմբավորումների (արաբական և հրեական) միջև լարվածության ուժեղացմանը: Ներհամայնքային կրոնական հարցերի լուծման նպատակով անգլիացիները թույլատրեցին հրեաներին ստեղծել Գերագույն կրոնական խորհուրդ (Ռաբբինատ), իսկ մուսուլմանները ստեղծեցին Գերագույն մուսուլմանական խորհուրդը¹¹: Որպես գործադիր օրգան Երուսաղեմում հրեաների ինքնակառավարման համար 1921 թ. ստեղծվել էր Ազգային կոմիտեն (Վաադ Լեումմի), իսկ ավելի ուշ այստեղ հաստատվեցին սիոնիստական շարժման գլխավոր կազմակերպությունները՝ Հրեական Գործակալության Գործադիր Կոմիտեն, Հրեական Ազգային Ֆոնդը: Միաժամանակ ուժեղանում էր Երուսաղեմի արաբական երկու հայտնի տոհմերի (Հուսեյնիների և Նաշաշիների) ազդեցությունը Պաղեստինի արաբական բնակչության վրա: Այդ հանգամանքը հաշվի առնելով 1921 թ. գերագույն կոմիսարը Երուսաղեմի իսլամ կրոնապետի պաշտոնին նշանակեց Ամին ալ-Հուսեյնին, որը հաջորդ տարի ընտրվեց Գերագույն մուսուլմանական խորհրդի նախագահ: Այսպիսով, Երուսաղեմը դառնում է պաղեստինյան արաբների ազգային շարժման կենտրոն և 1936 թ. այստեղ ստեղծվում է Արաբական Գերագույն Կոմիտեն:

Երուսաղեմի բնակչությունը արագորեն աճում էր և ավելանում էին նոր քաղամասեր, որոնք մեծամասամբ պահպանում էին կրոնա-համայնքային սկզբունքով կատարված աշխարհագրական բաժանումը

(բրիտանական մանդատի շրջանում Երուսաղեմում կառուցվեցին 36 նոր քաղամասեր) ¹²:

Հրեական քաղամասերի նմանօրինակ ինտենսիվ աճը Երուսաղեմում չէր կարող չհարուցել արաբների դժգոհությունը, որը ի վերջո հանգեցրեց զինված բախումների արաբների և հրեաների միջև: 1928 թ. սեպտեմբերին վեճ առաջացավ Երուսաղեմի Արևմտյան պատի (լացի պատ) հետ կապված: Հրեաները արգելափակոց տեղադրեցին աղոթք անող կանանց և տղամարդկանց միջև, որը հարուցեց Մուսուլմանական Գերագույն Խորհրդի խիստ դժգոհությունը: Լարվածությունը արագորեն վերաճեց զինված բախման՝ 1929 թ. օգոստոսին ¹³ հանգեցնելով բազմաթիվ զոհերի ինչպես արաբական, այնպես էլ հրեական բնակչության շրջանում:

1936 թ. իրադրությունը Երուսաղեմում նորից լարվեց՝ կապված Գերմանիայից դեսպի Պաղեստին հրեական մեծ ներգաղթի հետ: Մուսուլմանական Գերագույն Կոմիտեն Ամին ալ-Հուսեյնի գլխավորությամբ հայտարարեց համընդհանուր գործադուլ սկսելու և հարկերը չվճարելու մասին այնքան ժամանակ, քանի դեռ չի կասեցվել հրեաների ներգաղթը ¹⁴: Պաղեստին ժամանած բրիտանական կառավարական հանձնաժողովը Պիլի գլխավորությամբ՝ առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական պետությունների, իսկ Երուսաղեմում, Բեթղեհեմում և Նազարեթում հաստատել միջազգային վերահսկողություն կամ մանդատ ¹⁵: Հանձնաժողովը առաջարկեց Բալխուրի հռչակագրի ¹⁶ դրույթները չտարածել Երուսաղեմի վրա, և որ քաղաքի բնակիչներն իրենք ընտրեն իրենց քաղաքացիական պատկանելիությունը ¹⁷: Սակայն 1938 թ. նոյեմբերին բրիտանական կառավարությունը այս ծրագրի իրականացումը համարեց պրակտիկորեն անիրականանալի ¹⁸: Ամբողջ 1937-38 թթ. ընթացքում Երուսաղեմում զինված բախումները շարունակվեցին ¹⁹:

Անգլիական իշխանությունները, զինված բախումներին վերջ տալու նպատակով, ստիպված Արաբական Գերագույն Կոմիտեին հայտարարեցին օրենքից դուրս, պաշտոնագրկեցին այդ կազմակերպության նախագահ ալ-Հուսեյնին, ինչպես նաև Երուսաղեմի քաղաքագլուխ Խալիլին՝ նրա վտխարեն քաղաքագլուխ նշանակելով հրեա Դանիել Օստերին ²⁰: Սակայն սկսած 1939 թ. Անգլիան վախեց իր վերաբերմունքը արաբների հանդեպ: Բրիտանական կառավարությունը 1939 թ. մայիսի 17-ին հրապարակեց հաշվետվություն Պաղեստինի վերաբերյալ (Սպիտակ գիրքը) ²¹: Սպիտակ գիրքը, ըստ էության, չեղյալ էր հայտարարում բրիտանական կառավարության խոստումը հրեաներին՝ նպաստել Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծմանը: Միաժամանակ Սպիտակ Գիրքը նախատեսում էր դեսպի Պաղեստին հրեական ներգաղթի սահմանափակում, հրեաների կողմից հողերի գնման սահմանափա-

կում, և նույնիսկ անկախ Պաղեստինյան պետության ստեղծում տաս տարի անց²³։ Հրեաները դիմեցին զանգվածային գործադուլների և սադրիչ գործողությունների։ Սկսված երկրորդ համաշխարհային պատերազմը միաժամանակ թուլացրեց լարվածությունը Երուսաղեմում։ Սակայն 1944 թ. վերջին պարզ դարձավ, որ Անգլիան չի հրաժարվելու այն քաղաքական կուրսից, որ նախատեսված էր 1939 թ. Սալիտակ գրքում։ Երուսաղեմի կարգավիճակի հարցը մնում էր անհայտ։ Այսպիսի պայմաններում հրեական զինված կազմակերպությունները²⁴ սկսեցին ռազմական սադրիչ գործողություններ ձեռնարկել բրիտանական իշխանությունների դեմ²⁵։ Բրիտանական իշխանությունները քաղաքի որոշ մասերում մտցրին արտակարգ դրություն և Երուսաղեմի, ինչպես նաև ողջ Պաղեստինի հարցը ստիպված էին տեղափոխել ՄԱԿ²⁶։

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նստաշրջանում, որը տեղի ունեցավ 1947 թ. ապրիլի 28-ից՝ մայիսի 15-ը, ստեղծվեց հատուկ հանձնաժողով, Կանադայի, Չեխոսլովակիայի, Գվատեմալայի, Նիդեռլանդների, Պերուի, Ըվեդիայի, Ուրուգվայի, Հարավսլավիայի, Հնդկաստանի, Իրանի և Ավստրալիայի ներկայացուցիչներից, որը պետք է ներկայացներ ծրագրեր պաղեստինյան հարցի, այդ թվում նաև Երուսաղեմի կարգավիճակի, լուծման վերաբերյալ։ Հատուկ հանձնաժողովը ուղևորվեց Պաղեստին²⁶։ Այս ընթացքում Պաղեստինյան հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը առաջ քաշեց երկու ծրագիր։ Առաջինը կոչվում էր «մեծամասնության ծրագիր»²⁷ և առաջարկվել էր Կանադայի, Պերուի, Գվատեմալայի, Նիդեռլանդների, Չեխոսլովակիայի և Ուրուգվայի, ներկայացուցիչների կողմից։ Այն նախատեսում էր տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ Երուսաղեմը թողնելով միջազգային հսկողության տակ։

Երկրորդ ծրագիրը, որ առաջարկվել էր Հնդկաստանի, Իրանի և Հարավսլավիայի ներկայացուցիչների կողմից և կոչվում էր «վաղըրամասնության ծագիր»²⁸, նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն՝ կազմված 2 ինքնավար մասերից, Երուսաղեմ մայրաքաղաքով։ Այս նախագիծը պաշտպանում էին ԽՍՀՄ-ը և արաբական երկրները։ Այս առաջարկությունների ուսումնասիրության համար ստեղծվեցին երկու ենթակոմիտեներ ։

Իր հերթին Անգլիան պարտավորվում էր ընդունել և ի կատար ածել ՄԱԿ-ի այն որոշումը, որը միաժամանակ կընդունեին և՛ արաբները, և՛ հրեաները։ Անգլիայի ներկայացուցիչը հայտարարեց, որ Անգլիան իր գործերը Պաղեստինից դուրս կրերի ամենաուշը մինչև 1948 թ. օգոստոսի 1-ը։ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2-րդ նստաշրջանում՝ 1947 թ. սեպ-

տեմբերի 16–նոյեմբերի 29–ը, բախումը այս 2 ծրագրերի շուրջը ավելի ակնառու դարձավ:

Երուսաղեմի կարգավիճակի շուրջ ՄԱԿ–ի Գլխավոր Ասամբլեան իր առաջին բանաձևը հրապարակում է 1947 թ. նոյեմբերի 29–ին²⁹: Դա No 181 (II) բանաձևն էր³⁰: Համաձայն այդ բանաձևի Երուսաղեմը պետք է ստանար հատուկ միջազգային կարգավիճակ, այսպես կոչված *corpus separatum*, լինել միասնական և գտնվել ՄԱԿ–ի վերահսկողության տակ: Անգլիական կառավարությունը հայտարարեց, որ դուրս է բերելու իր գինված ուժերը Պաղեստինից: Երուսաղեմում, որը շարունակում էր իր քաղաքանորոն մնալ Մեծ Բրիտանիայի իրավասության տակ, սկսվեցին զինված բախումներ: 1948–49 թթ. արաբա–իսրայելական պատերազմը հարցականի տակ դրեց ՄԱԿ–ի կողմից Երուսաղեմին տրված կարգավիճակը³¹: Հին քաղաքի հրեական թաղամասերը հայտնվեցին մեկուսացված վիճակում, իսկ Նոր քաղաքը բաժանվեց գոտիների, որոնք վերահսկվում էին կամ արաբների կամ հրեաների կողմից³²: 1948 թ. մայիսի 14–ին քաղաքը թողեցին վերջին բրիտանական զորքերը: Նույն օրը Արաբական Լեգեոնը՝ կազմված սիրիական, լիբանանյան, իրաքյան, եգիպտական և հորդանանյան զինված ուժերից, շրջափակեց Երուսաղեմը արևելքից, հյուսիսից և հյուսիս–արևմուտքից:

Այսպիսի պայմաններում, ՄԱԿ–ի միջնորդությամբ, 1948 թ. հունիսի 11–ին կնքվեց զինադադար, ըստ որի արևելյան Երուսաղեմը հայտնվեց Հորդանանի, իսկ արևմտյան Երուսաղեմը՝ Իսրայելի վերահսկողության տակ: ՄԱԿ–ում շարունակվում էին Երուսաղեմի կարգավիճակի շուրջ քննարկումները և ՄԱԿ–ի միջնորդ Ֆոլկ Բեռնադոտը, անարդյունավետ համարելով Երուսաղեմի կարգավիճակը որպես *corpus separatum*, առաջարկեց Երուսաղեմը ամբողջովին հանձնել Հորդանանին³³: Այդ առաջարկությունը խիստ բացասական արձագանք ունեցավ ՄԱԿ–ում, որը հակված էր պահպանել քաղաքի միջազգային կարգավիճակը:

1948 թ. սեպտեմբերի 11–ին ՄԱԿ–ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց՝ 194–րդ բանաձևը կրկին հաստատելով Երուսաղեմի միջազգային կարգավիճակը³⁴:

1949 թ. դեկտեմբերի 9–ին ՄԱԿ–ի Գլխավոր Ասամբլեան երրորդ անգամ ընդունեց բանաձև Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ: Քաղաքին դարձյալ տրվում էր միջազգային կարգավիճակ, *corpus separatum*³⁵: Այդ նախագծին կողմ քվեարկեց 38, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 7 երկրներ: Այդ ընթացքում քաղաքի կարգավիճակի հարցի շուրջ քննարկումները և իրադարձությունների հետագա զարգացումները հանգեցրին նրան, որ և՛ Իսրայելը, և՛ Հորդանանը հրաժարվեցին ՄԱԿ–ի վերոհիշյալ բանաձևերի իրականացումից:

Դեռ 1948 թ. օգոստոսի 2-ին հրեական գորքերի հրամանատար Դավիդ Բեն Գուրյոնը հրապարակել էր □ 12 հռչակագիրը, ըստ որի արևմտյան Երուսաղեմը հայտարարվում էր օկուպացված տարածք, որի վրա տարածվում էր Իսրայելի իրավասությունը: Իսկ 1948 թ. դեկտեմբերի 13-ին Հորդանանի պառլամենտը օրենք ընդունեց արևելյան Երուսաղեմի անկեքսիայի մասին³⁶:

ՄԱԿ-ի՝ 1949 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած բանաձևից երկու օր անց, դեկտեմբերի 11-ին, Իսրայելի վարչապետ Դավիդ Բեն Գուրյոնը հայտարարեց, որ Երուսաղեմը հանդիսանում է Իսրայելի անբաժան մասը և հավերժական մայրաքաղաքը և, որ ՄԱԿ-ի ոչ մի բանաձև չի կարող վախճել այդ պատմական փաստը: Իսրայելի կառավարությունը որոշում ընդունեց Կնեսետը (պառլամենտը) արևմտյան Երուսաղեմ տեղափոխելու մասին: Իսրայելից հետո, 1950 թ. ապրիլին Հորդանանը արևելյան Երուսաղեմը հռչակեց Հաշիմյան թագավորության երկրորդ մայրաքաղաք³⁷:

1950-1967 թթ. ընթացքում Երուսաղեմի կարգավիճակի շուրջ ՄԱԿ-ը որևէ արմատական որոշում կամ բանաձև չընդունեց: Մինչդեռ քաղաքի տարածքը ընդարձակվում էր, իսկ բնակչության թիվը աճում էր³⁸: Երուսաղեմի կարգավիճակի հարցը մորից քննարկման առարկա դարձավ 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո³⁹, երբ ամբողջ Երուսաղեմը գտնվում է Իսրայելի վերահսկողության տակ:

Corpus separatum կարգավիճակի փոխարեն ԱՄՆ-ը ՄԱԿ-ում առաջարկեց Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս, որպես հիմք ընդունել այն, որ քաղաքը պետք է լինի միասնական և նրա հետագա կարգավիճակը պետք է որոշվի հակամարտող կողմերի առաջարկություններից ելնելով: Միաժամանակ ՄԱԿ-ը առաջարկեց կողմերին խուսափել միակողմանի քայլերից՝ քաղաքի կարգավիճակը որոշելիս:

Սակայն, Իսրայելն արդեն 1967 թ. հունիսի 28-ին վախեց Երուսաղեմի սահմանները ի հաշիվ արվարձանային հրեական բնակավայրերի: Քաղաքի տարածքը երկու անգամ մեծացավ, իսկ բնակչության մեջ մոտ երեք անգամ գերակշռեցին հրեաները: Քաղաքը փաստացիորեն դարձավ միասնական: 1980 թ. հուլիսի 30-ին Իսրայելը պաշտոնապես անկեքսիայի ենթարկեց ամբողջ Երուսաղեմը՝ քաղաքը հայտարարելով Իսրայելի միակ և անբաժանելի մայրաքաղաքը:

Երուսաղեմի կարգավիճակի շուրջ հետագա քննարկումները արդեն կատարվում էին արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման ընդհանուր ֆոնի վրա: Ընդ որում Երուսաղեմի կարգավիճակը քննարկելիս՝ ավելի շատ խոսվում էր արևելյան Երուսաղեմի և ոչ թե ամբողջ Երուսաղեմի մասին:

1993 թ. կնքված Օսլո-1, 1995 թ. Օսլո-2, և 1998 թ. Ուայ-Փլան-թեյշնի պաղեստինա-իսրայելական համաձայնագրերում⁴⁰ Երուսաղեմի հարցը դիտվում էր սոսկ որպես խնդիր, որը պետք է քննարկվի աբաբա-իսրայելական հակամարտության կարգավորման վերջնական փուլում: Ընդ որում, նման մոտեցումը չէր արգելում Իսրայելին շարունակել հրեական նոր թաղամասերի կառուցումը արևելյան Երուսաղեմում: Այդ համաձայնագրը լարվածության լուրջ աղբյուր էր, քանզի փոփոխության էր ենթարկվում դեմոգրաֆիական իրավիճակը հոգուտ հրեաների:

Իսրայելա-պաղեստինյան հետագա բանակցությունները և միջնորդությունները ցույց տվեցին, որ, իրոք, հակամարտող կողմերի համար, ամենադժվարը Երուսաղեմի կարգավիճակի հարցն է: ՄԱԿ-ի նախագահ Բիլլ Զլինթոնը՝ 2000 թ. հուլիսի 11-14-ը Քեմփ Դևիդում հանդես եկավ Իսրայելի և ՊԱԿ-ի միջև վերջնական պայմանագիր կնքելու շուրջ առաջարկություններով: Քեմփ-Դևիդում Երուսաղեմի կարգավիճակի շուրջ քննարկումներ սկսելու ժամանակ կողմերը տարածայնություններ ունեցան այն խնդրի շուրջ, թե համարվու՞մ են արդյոք Երուսաղեմին շրջապատող արվարձանները արևմտյան ափի մասը, թե ոչ: Այդ տարածքը կազմում է արևմտյան ափի 7%-ը և պաղեստինցիները, բնակաբաբը, պնդեցին, որ այդ տարածքները համարվեն արևմտյան ափի անբաժան մասը: Քլինթոնը առաջարկեց Պաղեստինյան ինքնավարությանը հանձնել սկզբում արևմտյան ափի 73%-ը (առանց վերոհիշյալ 7 տոկոսի) իսկ հետագա 10-25 տարվա ընթացքում մինչև 94%-ը (առանց արևելյան Երուսաղեմի)⁴¹: Բանակցող կողմերը կարուկ կերպով մերժեցին Քլինթոնի առաջարկությունները և Քեմփդևիդյան բանակցությունները ավարտվեցին անարդյունք: Բիլլ Զլինթոնը, որը ցանկանում էր մինչև իր նախագահության ժամկետի ավարտը հասնել իսրայելա-պաղեստինյան համաձայնագրի կնքմանը, 2000 թ. դեկտեմբերի 24-ին հանդես եկավ նոր առաջարկությամբ՝⁴² Արևելյան Երուսաղեմը բաժանել մուսուլմանական, հայկական կամ քրիստոնեական և հրեական մասերի:

Պաղեստինցիները ստանալու էին արաբական թաղամասերը, ներառյալ Հարամ-աս-Շարիֆը, արևելյան Երուսաղեմի 25%-ը և արևելյան Երուսաղեմի արաբական արվարձանները: Իսրայելը պահելու էր հայկական և հրեական թաղամասերը և արևելյան Երուսաղեմի հրեական արվարձանները, ներառյալ արևմտյան պատը: (Այստեղ բաց էր մնում հաղորդակցության հարցը): Ինչպես սպասվում էր, մերժվեցին նաև այս առաջարկությունները:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Երուսաղեմի կարգավիճակի հարցը ՄԱԿ-ի կողմից գրեթե դադարում է քննարկման առարկա լինելուց: Վերջին տասնամյակներում ՄԱԿ-ը Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս՝ սահմանափակվում է սոսկ բանաձևերի ընդունու-

մով, որոնք պարզապես կոչ են անում Իսրայելին դադարեցնել Արևելյան Երուսաղեմում հրեական նոր թաղամասերի շինարարությունը և չեն անդրադառնում քաղաքի կարգավիճակի կամ պատկանելիության հարցին:

Մեր կարծիքով Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել հետևյալ երեք հայտնի իրողությունները՝

1. Երուսաղեմի փաստացի դրությունը. այն է քաղաքի՝ ամբողջովին Իսրայելի վերահսկողության տակ գտնվելը:

2. Արաբների պահանջները: Պաղեստինցիները ոչ մի կերպ չեն ուզում հրաժարվել Արևելյան Երուսաղեմից, որը համարում են ապագա պաղեստինյան պետության մայրաքաղաք:

3. ՄԱԿ-ի բանաձևերը Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ, որոնք իրավաբանորեն հաստատում են քաղաքի միջազգային կարգավիճակը:

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ երեք դրույթները գրեթե ամբողջովին հակասում են միմյանց: Այդ ստումով, մեր կարծիքով Երուսաղեմի կարգավիճակի որոշման հարցում լավագույն տարբերակ կարող է լինել ՄԱԿ-ի նախկին նախագահ Բիլլ Քլինթոնի նախագիծը: Կարծում ենք Երուսաղեմի կարգավիճակի վերջնական որոշումը կնպաստի մեծ խրախելա-պաղեստինյան հակամարտության վերջնական կարգավորմանը:

ARTAK H. HOVHANNISYAN

THE STATUS OF THE JERUSALEM IN THE UNO

Jerusalem has emerged as a major point of contention in Israel's negotiations with its Arab neighbors, particularly the Palestinians. Claims of historic, religious and legal rights to the city have been asserted by the various parties to the conflict and, accordingly, these three aspects should be reviewed: The observation that, "Jerusalem is holy to three religions," tends to mislead, since Jerusalem is holy to Jews, Muslims and Christians in fundamentally different ways. Jerusalem contains sites holy to Muslims and Christians, and is one of many locations of religious significance to them. Israel has advanced a coherent case, based upon the precepts of international law, for sovereignty over Jerusalem. The Palestinians, for their part, have failed to offer any legal grounds in support of their claim to the city. Their claim seems to be based solely on their desire to possess it. Throughout history, the Jewish People has maintained a presence in Jerusalem, ever since King David established the city as his capital nearly 3, 000 years ago.

Following the World War I victory of the Allies in the Middle East, Britain occupied Mandatory Palestine, including what is now Jordan, which was separated from the rest of Mandatory Palestine by Colonial Secretary Winston Churchill and

given to the Hashemite family of Arabia in 1921 — assuming military and administrative control for the area.

This situation was endorsed by the international community, and in 1922 Britain was awarded the Mandate for Palestine by the League of Nations which entailed, among other things, the fostering of a Jewish National Home in the territory, as proposed by the Balfour Declaration.

On 29 November 1947, the United Nations General Assembly voted for partition Mandatory Palestine into Jewish and Arab states, and to make Jerusalem a "separate body" (corpus separatum) under a special international regime, with "suitable guarantees for the protection of Holy Places."

The Jews accepted the resolution, but the Arabs both those living inside and beyond the territory of the Mandate rejected the partition resolution and the plan to internationalize Jerusalem, thereby nullifying the proposal.

From a legal perspective, the departure of the British in May 1948 left Jerusalem's status undetermined. The end of the 1948–49 Arab–Israeli war found the western part of the city in Israeli hands, and the eastern part (including the Old City) controlled by Jordan. In 1949, Israel and Jordan signed an armistice, dividing Jerusalem into two demarcated zones. These lines, however, were seen by both sides to be temporary until a peace treaty could be concluded; neither party viewed the cease–fire lines as permanent borders.

On 30 July 1980, the Israeli Knesset adopted the Basic Law: declaring Jerusalem, as the Capital of Israel.

Between July 11–24, 2000, U. S. President Clinton, Israeli Prime Minister Ehud Barak and PNA Chairman Yasser Arafat met at Camp David in order to negotiate a final settlement of the Palestine–Israel conflict based on the Oslo accords. The city will be divided along the principle of "Arab sections to the Arabs, Jewish sections to the Jews." The Palestinians will get the Arab neighborhoods of East Jerusalem and the Arab quarter of the Old City, including the Temple Mount (*Haram–as–Sharif*). Israel will keep the Jewish neighborhoods and the Jewish and Armenian quarters of the Old City, including the Western Wall. The issue of how to link up the patchwork of Arab and Jewish neighborhood remains a thorny one. The negotiations ended in failure with a bland communique, since the sides could not agree about the issue of Jerusalem. The Palestinians demanded sovereignty over all of East Jerusalem, including the Haram–As–Sharif (Temple Mount).

ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. 1993 թ. կնքվեց Օսլո 1, 1995 թ.՝ Օսլո 2, 1997 թ.՝ Հեբրոնի, 1998 թ.՝ Ուայ–Փանթիչյունի պայմանագրերը, որոնցով պաղեստինցի արաբները ստացան որոշակի տարածքներ և ինքնավարություն Հորդանան գետի արևմտյան ափում և Ղազալյի հատվածում:
5. Авдиев В. И., История древнего Востока, изд. 3, М. 1970.
6. Струве В. В., История древнего Востока, М. 1941.
7. Авдиев В. И., История древнего Востока, изд. 3, М. 1970.
Աստվածաշունչ, Գիրք Թազավորաց:

8. Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, изд. Общество по исследованию еврейских общин, т. 2, Иерусалим, 1982.
9. Եզրիպատացիները այն անվանել են Ռուշալիմում, հրեաները՝ Իրշալիմ (խաղաղության քաղաք), հույները՝ Երուսաղիմա, հռոմեական կայսր Ադրիանոսը՝ Էլի Կապիտոլինա, արաբները՝ Սադիմատ Բայտ ալ Մակդիս (Տաճարի քաղաք) կամ Էլ-Կուդս (Սուրբ):
10. Եզրիպատոսից Երուսաղիմ ուղարկվեցին սննդամթերք, իսկ տիֆի ե խոլերիայի համաճարակի դեմ պայքարելու նպատակով ստեղծվեցին պոլիկլինիկաների ցանցեր և ամբուլատոր կետեր: Ընդ որում այդ օգնությունից օգտվեցին 2000 հայեր, որոնք փախել էին թուրքական ջարդից:
11. The Balfour Declaration, London, 1961. [Http: //www. ariga. com/.](http://www.ariga.com/), Mandate For Palestine, Department of State, Washington D. C., 1931.
12. Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, т. 2, Иерусалим, 1982.
13. Там же.
14. Там же.
15. 1925 թ. ապրիլին Լորդ Բալֆորը հանդիսավոր կերպով կատարեց Հրեական համալսարանի բացումը: 1929 թ. քաղաքը էլեկտրոֆիկացվեց, 1936 թ. սկսեց գործել «Իսրայելի ձայն» ռադիոկայանը: Մուսուլմանական քաղամասերի կառուցումը կատարվում էր հիմնականում Հին քաղաքի հյուսիսում, քրիստոնեական քաղամասերը՝ հարավ-արևմուտքում, իսկ հրեական քաղամասերը կառուցվում էին հյուսիս-արևելքում, արևմուտքում, հարավում և արվարձաններում: Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, т. 2, Иерусалим, 1982.
16. Sheen V., Holy Land 1929, From Haven To Conquest, Readings in Zionism and The Palestine Problem until 1948, ed. W. Khalidi, The Institute For Palestine Studies, Beirut 1971, pp. 273–301.
17. Simpson J. Hope, On the Employment of Arab Labour, From Haven To Conquest, pp. 303–307.
18. Reid Th., Reservations on the Plans For the Partition of Palestine, From Haven To Conquest, pp. 409–432.
19. Հռչակագիրը նախատեսում էր Պաղեստինում հրեաների համար ստեղծել Ազգային օջախ:
20. Reid Th., Reservations on the Plans For the Partition of Palestine, pp. 409–432.
21. Краткая Еврейская Энциклопедия, т. 2.
22. Barbour N, The Dark Path of Repression 1937–1938, From Haven To Conquest, pp. 335–342.
23. Краткая Еврейская Энциклопедия, т. 2.
24. Barbour N., The White Paper of 1939, From Haven To Conquest, pp. 461–475.
25. Ibid, pp. 461–475.
26. Այդ ժամանակ Պաղեստինում գործում էին Հազանա, Էցել, Լեհի, Իրզուն Ցվեյ Լեումի հրեական զինված կազմակերպությունները: The Zionist Military Organizations, From Haven to Conquest, pp. 595–600.

27. White Paper on Violancee 1946, From Haven to Conquest, pp. 601–612. 1946 թ. հուլիսի 22-ին Էցեի գրոհայինները պայթեցրին «Դավիդ թագավոր» հյուրանոցը՝ սպանելով 82 մարդու:
28. Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Երևան 2001, էջ 8:
29. Muhammad Z. KH., Palestine in the UNO, 1948, From Haven to Conquest, pp. 6–23.
30. Report to The General Assembly by the UN Special Committee on Palestine, Official Records of the Second Session of GA, 1947, Supplement No 11.
31. Ibid.
32. Building For Peace in the Middle East: an Israeli–Palestinian Dialogue, UN, 1992.
33. Report to the General Assembly of the UN Special Committee on Palestine, Official Records of the Second Session of GA, Supplement No 11.
34. Glubb J. B., The Battle for The Old City of Jerusalem, From Haven To Conquest, pp. 785–788.
35. Ibid, pp. 785–788.
36. Neff D., Fallen Pillars: US Policy Towards Palestine and Israel since 1945, Washington D. C., 1995, pp. 129–131.
37. Պրիմակով Ե. Մ., Սի դավադրության պատմություն, ԱՄՆ-ի մերձավորա-րեկյան քաղաքականությունը 70-ական թթ և 80-ական թթ սկզբներին, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, էջ 125:
38. United Nations Resolutions, Historical Documents, [Http://ariga.com.peacebiz](http://ariga.com.peacebiz).
39. Neff D., Fallen Pillars: US Policy Towards Palestine and Israel since 1945, p. 132.
40. Ibid, p. 135.
41. Արևելյան Երուսաղեմի հյուսիսային մասում առաջացավ նոր արաբական շրջան, իսկ արևմտյան Երուսաղեմի հարավ-արևմուտքում առաջացան հրեական 10 նոր թաղամասեր:
42. Հինգ օրվա ընթացքում իսրայելը զրավեց Ղազան, Սինայի թերակղզին, Գոլանները, Հորդանան գետի արևմտյան ափը, արևելյան Երուսաղեմը:
43. The Israeli–Palestinian Agreement: In the Footsteps of Camp David, International Affairs Report, Anti Defamation League, New York, September, 1993. p. 10. The Israeli–Palestinian Agreement on the West Bank and Gaza Strip, Washington, D. C, September 28, 1995 The Wye Memorandum, Historical Documents, Washington D. C. 23.10.1998.